

կապուեցաւ անոր սրտառուէ, անքակտելի երախտագիտութեամբ մը: Կովարած Ակոյի քարայրին մէջ լռին հրակայ մըն էր անիկա, քաղցր աչքերով, որոնք երբեմն կը մշուշուէին տարակայ զգայնութիւններով, երեսներուն վրայ դալուկի զարնող: Բարութիւնն ու ջնջուածութիւնը առաջին բխումներն էին անոր ծանօթացումին: Գոմէշի բա՛ն մը, որ մականունէն թէ կազմէն կը զարգանար, երբ ժամերով կ'երկննար քովիկը, շարժումը զգոյշ, կզակները աղալով, որոճալու շէշտ տպաւորութեամբ մը, բայց ուժի, թաքուն բարկութեան յայտնի գզացում մըն ալ թեւադրելով անպայման: Ուրի՛ անիկա կը հագնէր իր ուժին կշիռը, հեքիաթներու շատ ախորժած մէկ տիպարը մարմնաւորելով, ան՝ որ քարի կտորները ալիւրի պէս կը փշրէր մատներուն մէջ, բայց որբ տղաքը լացով, գուրգուրանքով կը պաշտպանէր իրենց հալածիչներէն, նոյնիսկ թագաւորներ եթէ ըլլային ասոնք: Իր հայրենիքին մէջ, Մաթիկին հանդիպումէն առաջ, մեծկակ տղայ մըն էր, բառը գործածելով իմացական երանգով: Խելքէն ոչ թէ պակաս, այլ՝ քիչիկ մը թոյլ: Ծորճորուն իր գնա՛ցքը, որ գետ իջնող գոմէշները կը յեղեցնէր: Եղերական սարսափ մը անոր անդրանիկ պատանութիւնը զարկած էր անդարման ալլասերումով մը: Ամիս մը անոր լեզուն կապ էր մնացեր, այդ վախին ներքեւ: Բացուելէն յետոյ ալ անիկա չէր կրնար ուրիշներուն պէս արագ յօդ կազմել: Կակազում չունէր: Բայց խօսքը չէր յօրինուեր դիւրութեամբ: Այս դժուարութիւնը ի վերջոյ զինքը զգոյշ ըրաւ սովորական ձայնէն: Ու քիչ-քիչ մոռցաւ խօսիլը: Օրերով, շաբաթով բերանը չէր բանար: Թէեւ համր չըլլար: Իմացական ուրիշ զօրութիւններ ալ ազդուած էին այդ դրուագէն: Քսանէն հտքն ալ իր միտքը դեռ կը պահէր նկարագիրը երկրորդ պատանութեան ու կը հաւատար ամէն լսածին, որքան ալ անհեթեթ ըլլար ասիկա, ու այս գիծով՝ հրաշքներուն, ֆիւմ, ոգի, Աստուած, մեղայիք (հրեշտակ) տեսողներուն, ինչպէս նաեւ միւս գիծէն՝ բոլոր կախարդական պատմութիւններուն: Մաթիկին ներկայութեանը, իր զար-